ԵԴ1/3911/01/25
(ՀԿԴ/0333/01/25)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 դեկտեմբերի 2025 թվական քՍերևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին փոխարինող Հայկ Գրիգորյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/3911/01/25 (ՀԿԴ/0333/01/25) քրեական վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 5-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2025 թվականի նոյեմբերի 3-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Սասուն Սուրենի Առուշանյանի վերաբերյալ՝ 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին կետով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետին), 232-րդ հոդվածով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասին) և 17-99-րդ հոդվածի 7-

րդ կետով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 46-155-րդ հոդվածի 2-րդ մասին 13-րդ կետին) թիվ 69144625 (ԵԴ1/3911/01/25) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Գ.Պողոսյան) 2025 թվականի նոյեմբերի 7-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/3911/01/25 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, 2025 թվականի դեկտեմբերի 1-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/3911/01/25 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու մասին:

3. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Գ.Հովհաննիսյան) 2025 թվականի դեկտեմբերի 5-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0333/01/25 (ԵԴ1/3911/01/25) քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի դեկտեմբերի 11-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Սասուն Առուշանյանի նկատմամբ 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին կետով, 232-րդ հոդվածով և 17-99-րդ հոդվածի 7-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ նա *«(…) Հ.Հ.Ն.-ի և Ա.Ջ.Ա.-ի հետ՝ խմբի խազմում 1998 թվականի դեկտեմբերի 10-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, շահադիտական դրդումներով, քրեական վարույթի նախաքննությամբ դեռևս չպարզված անձի կազմակերպմամբ իրականացրել են ** ********** ********** Վ.Վ.Խ.-ի սպանությունը, ինչպես նաև ապօրինի կերպով ձեռք են բերել և պահել հրազեն:*

*Բացի այդ, ** ********** ********** Վ.Վ.Խ.-ի սպանության հանգամանքները թաքցնելու նպատակով Հ.Ն.-ի կատարմամբ, կազմակերպել է Ա.Զ.Ա.-ի սպանությունը:*

Այսպես.

*Սասուն Առուշանյանը, հանդիսանալով ԼՂՀ պաշտպանության բանակի զինծառայող, քրեական վարույթի նախաքննությամբ դեռևս չպարզված անձի կազմակերպմամբ համակարգել է և խմբի կազմում կատարել է ** ********** ********** Վ.Վ.Խ.-ի սպանությունը:*

1998 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին այդ կապակցությամբ Սասուն Առուշանյանը պայմանավորվածություններ է ձեռք բերել ԼՂՀ բնակիչներ, իր ծանոթներ Հ.Ն.-ի և Ա.Ա.-ի հետ, որոնցից Հ.Ն.-ին սպանություն կատարելու համար առաջարկել է 10.000 ԱՄՆ դոլար գումար, իսկ վերջինիս միջոցով Ա.Ա.-ին՝ 15.000 ԱՄՆ դոլար գումար:

Սպանությունն իրագործելու համար իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող Հ.Ն.-ի եղբորից՝ Ա.Ն.-ից Սասուն Առուշանյանը Ստեփանակերտ քաղաքում ձեռք է բերել «Մակարով» տեսակի ատրճանակի ինքնաշեն փող և խլացուցիչ, որոնք տեղադրել է ապօրինի պահվող, հանցագործության գործիք հանդիսացող «Մակարով» տեսակի 9մմ. տրամաչափի ատրճանակի վրա, որից հետո այն քաղաքից դուրս գտնվող վայրում կրակելով փորձարկել է՝ պարզելու համար կրակոցի ձայնի խլացման աստիճանը և պարզելով, որ խլացուցիչը բավարար չափով չի նվազեցնում ձայնը՝ սկսել է փամփուշտների վառոդային լիցքը նվազեցնելու եղանակով՝ Ա.Ն.-ի օգնությամբ գնդակները պարկուճներից առանձնացնել՝ քանդել փամփուշտները, որից հետո ինքնաշեն եղանակով կրկին հավաքել դրանք, ինչի արդյունքում պարկուճների և գնդակների վրա մնացել են տեխնիկական ներգործության հետքեր:

Այնուհետև, իրենց հանցավոր մտադրությունն իրագործելու համար Հ.Ն.-ն և Ա.Ա.-ն 1998 թվականի դեկտեմբերի 7-ին, իսկ Սասուն Առուշանյանը՝ դեկտեմբերի 8-ին Ստեփանակերտ քաղաքից եկել են Երևան՝ իրենց հետ բերելով նաև հանցագործության գործիք հանդիսացող նշված հրազենը: Հանցավոր խմբի գործողությունները համակարգել և ամբողջությամբ պլանավորել է Սասուն

Առուշանյանը, ով դեկտեմբերի 8-ին իր հանցակիցներին տարել և մատնացույց է արել այն շենքը, որտեղ բնակվել է Վ.Խ.-ն:

*1998 թվականի դեկտեմբերի 9-ի երեկոյան հանցավոր խմբի անդամները, գործելով նախնական համաձայնությամբ, հանդիպել են Հանրապետության Հրապարակում և Հ.Ն.-ի վարած «***» մակնիշի ավտոմեքենայով ժամը 23:30-ի սահմաններում ուղևորվել Վ.Խ.- ի բնակության վայր՝ ***** ****** *****_**** ******** ** շենքի մոտ, որտեղ դարանակալել են՝ սպասելով վերջինիս տուն գալուն: Ըստ նախնական դերաբաշխման՝ Հ.Ն.-ն սպասել է ավտոմեքենայում, իսկ Սասուն Առուշանյանը և Ա.Ա.-ն գտնվել են շենքի մուտքի մոտ: 1998 թվականի դեկտեմբերի 10-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, երբ Վ.Խ.-ն իր բնակարան գնալու համար մտել է շենքի մուտք, առաջին հարկի աստիճանահարթակում Սասուն Առուշանյանն ու Ա.Ա.-ն, հանդես գալով որպես համակատարողներ, փոխլրացնելով միմյանց գործողությունները, Վ.Խ.-ին սպանելու դիտավորությամբ իրենց մոտ ապօրինի պահվող, 9մմ. տրամաչափի ատրճանակային փամփուշտներ կրակելու համար վերափոխված՝ ինքնաշեն փող և խլացուցիչ ունեցող վերը նշված հրազենից նրա ուղղությամբ արձակել են 5 կրակոց, որոնցից 3-ը դեմքի, իսկ 2-ը՝ ձախից կրծքավանդակի թիկնային մակերեսի շրջաններին, ինչի արդյունքում վերջինս ստացած՝ կյանքի համար վտանգավոր ծանր մարմնական վնասվածքների արդյունքում տեղում մահացել է, իսկ հանցավոր խմբի անդամներ Սասուն Առուշանյանը, Ա.Ա.-ն ու Հ.Ն.-ն նույն ավտոմեքենայով անմիջապես հեռացել են դեպքի վայրից:*

*1998 թվականի դեկտեմբերի 10-ի գիշերը՝ Վ.Խ.-ի սպանությունն ավարտելուց հետո, Հ.Ն.-ն՝ Սասուն Առուշանյանի կազմակերպմամբ, ժամը 01-ից 03-ի սահմաններում Ա.Ա.-ին խաբեությամբ տարել է ******_********** ******* ******* ******* ******* ***** ******* *** **** ****** *******, որտեղ ավտոմեքենայի անվադողը փոխելու պատրվակով բացել է ավտոմեքենայի բեռնախցիկը և այնտեղից հանելով իր մոտ ապօրինի պահվող «АК-74» մակնիշի, 4629489 համարի ինքնաձիգը կրակահերթով սպանել է օգնելու նպատակով ավտոմեքենայից դուրս եկած Ա. Ա.-ին: Այնուհետև ևս մեկ ստուգողական կրակոց արձակելով Ա.Ա.-ի գլխի շրջանում և համոզվելով, որ նա մահացած է, վերջինիս դիակը չհայտնաբերելու նպատակով, իր*

*կողմից վարած «***» մակնիշի *** *** համարանիշի ավտոմեքենայով տեղափոխել է **********_********* ******** *_** ********* հարված, գցել է ճանապարհի եզրին որտեղ ստրուգելով Ա.Ա.-ի գրպանները վերցրել է Վ.Խ.-ի սպանության գործիք հանդիսացող ատրճանակը և խլացուցիչը ու հեռացել դեպքի վայրից: Վերադառնալով Երևան քաղաք հանդիպել է Սասուն Առուշանյանին ում փոխանցել է Ա.Ա.-ի մոտից վերցրած և Վ.Խ.-ի սպանության գործիք հանդիսացող ատրճանակը և խլացուցիչը: (…)»*[1]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, քննության առնելով պաշտպան Դ.Դալլաքյանի՝ թիվ ԵԴ1/3911/01/25 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու մասին միջնորդությունը, 2025 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը նախ հարկ է համարում արձանագրել, որ ինչպես բխում է սույն որոշման 1-ին կետում առկա փաստական տվյալներից Երևան քաղաքի Մյասնիկյանի տարածքի դատախազության քննիչ Ս.Հարությունյանի կողմից 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 100-րդ և 232-րդ հոդվածի 1-ին մասով 1998 թվականի դեկտեմբերի 10-ին հարուցվել է թիվ 15208498 քրեական գործը, այնուհետև ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ Դ.Սարոյանի կողմից 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին) 2025 թվականի օգոստոսի 1-ին նախաձեռնվել է թիվ 69131925 քրեական վարույթը: 2025 թվականի օգոստոսի 19-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ Դ.Սարոյանի կողմից կայացված՝ «Քրեական վարույթները միացնելու մասին» որոշմամբ որոշվել է՝ թիվ 69131925 քրեական վարույթը միացնել թիվ 15208498 քրեական վարույթին և նախաքննությունը շարունակել թիվ 15208498 քրեական վարույթի համարով: 2025 թվականի հոկտեմբերի 21-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 12, թերթեր 1-6:

հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ Դ.Սարոյանի կողմից կայացված՝ «Թիվ 15208498 քրեական վարույթից նոր վարույթ անջատելու և անջատված վարույթը ստանձնելու մասին» որոշմամբ՝ թիվ 15208498 քրեական վարույթից մեղադրյալ Սասուն Սուրենի Առուշանյանի կողմից 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին կետով (...), 232-րդ հոդվածով (...) և 17-րդ հոդվածով, 99-րդ հոդվածի 7-րդ կետով (...) նախատեսված ենթադրյալ հանցանքները կատարելու մասով վարույթն անջատվել է, որին շնորհվել է թիվ 69144625 վարույթի համարը:

Տվյալ դեպքում Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ 1998 թվականի դեկտեմբերի 10-ին հարուցված թիվ 15208498 քրեական գործին միացնելով 2025 թվականի օգոստոսի 1-ին նախաձեռնված թիվ 69131925 քրեական վարույթը և նախաքննությունը շարունակելով թիվ 15208498 քրեական վարույթի համարով, թիվ 15208498 ամբողջական վարույթը հանդիսացել է կոոուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման՝ այդ վարույթով մեղադրանքը պետք է քննի ՀՀ հակակոոուպցիոն դատարանը:

Տվյալ դեպքում Դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ սույն քրեական վարույթը անջատվել է ՀՀ հակակոոուպցիոն դատարանին ընդդատյա թիվ 15208498 քրեական վարույթից, որոնք փոխկապակցված են միմյանց հետ ինչի մասին է վկայում նաև սույն որոշման 2-րդ կետում առկա ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանի որոշմամբ արված այն հետևությունը, որ «(...) [Թ]իվ 69131925 քրեական վարույթը նախաձեռնվել է ՀՀ քննչական կոմիտեի քննիչի կողմից քննվող թիվ 15208498 քրեական վարույթի նախաքննության ընթացքում հայտնաբերված՝ ՀՀ հակակոոուպցիոն կոմիտեի քննիչի ենթակայությանը վերապահված ենթադրյալ հանցագործության հատկանիշներով, սակայն փաստական հանգամանքներով կապված է վարույթը նախաձեռնած քննիչին ենթակա՝ թիվ 15208498 քրեական վարույթի հետ:(...)»:

Վերոգրյալների հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ այն պայմաններում, երբ թիվ 15208498 քրեական վարույթով մեղադրանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարագավորման

շրջանակներում պետք է քննի ՀՀ հակակոռուպցիոն դատարանը, ուստի ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա վերը նշված վարույթից սույն քրեական վարույթի անջատումը չի կարող հանգեցնել առարկայական ընդդատության փոփոխման, դա էլ այն պայմաններում, երբ սույն քրեական վարույթը փոխկապակցված է վերը նշված քրեական վարույթի հետ, ինչը փաստել է նաև ՀՀ գլխավոր դատախազը սույն որոշման 2-րդ կետում առկա որոշմամբ:

Այլ կերպ ասած՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա վարույթով ըստ էության տեխնիկական գործողության կատարումն, այն է՝ մաս անջատելը, չի կարող հանգեցնել այդ վարույթի առարկայական ընդդատության փոփոխման, դա էլ այն պայմաններում, երբ այդ երկու վարույթները ինպես վերը նշվեց փոխկապակցված են միմյանց հետ:

Այսպիսով՝ պետք է փաստել, որ սույն վարույթի նյութերի, այդ թվում՝ մեղադրական եզրակացության ուսումնասիրությունից հետևում է, որ սույն թիվ 69144625 քրեական վարույթն անջատվել է թիվ 15208498 կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ քրեական վարույթից և սույն քրեական վարույթն անմիջականորեն կապված է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա հիշյալ կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթի հետ:

Հետևաբար, հաշվի առնելով արդարադատության շահը, այդ թվում՝ վարույթի պատշաճ և համակողմանի քննությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ Դատարանը գտնում է, որ սույն քրեական գործն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին: (…)»[2]*:*

7. Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 5-ի որոշման համաձայն՝ *«(…) Դատարանն արձանագրում է հետևյալը.*

1) Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ի՝ Սասուն Սուրենի Առուշանյանին ներկայացված մեղադրանքը (…) չի հանդիսանում կոռուպցիոն բնույթի հանցանք:

(…)

---

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 14, թերթեր 98-104:

Դատարանի գնահատմամբ, [Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի պատճառաբանությունը] բավարար չէ գալու այն եզրակացության, որ թիվ ԵԴ1/3911/01/25 քրեական գործն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, նման տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում կստացվի, որ երբ՝

- նախաքննության ընթացքում 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին) 2025 թվականի օգոստոսի 1-ին նախաձեռնված թիվ 69131925 քրեական վարույթը, որը միացվել է թիվ 15208498 քրեական վարույթին, կարճվի, ուրեմն նշված փաստով պայմանավորված քրեական գործը ընդդատյա է դառնում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին.

(…)

- կամ ոչ կոռուպցիոն բնույթի նախաձեռնված վարույթից անջատված մասին քննության ժամանակ, երբ նախաքննության ժամանակ հիմնական գործի քննության ընթացքում հայտնաբերվի նոր ենթադրյալ կոռուպցիոն բնույթի հանցագործության դեպք, նախաձեռնվի վարույթի և միացվի հիմնական գործին՝ թեկուզ նաև փոխկապակցված լինի անջատված մասի հետ, ապա Դատարանում քննվող անջատված մասով վարույթը ընդդատյա է դառնում ՀՀ հակակոռուպցիոն դատարանին և ճիշտ հակառակը:

Դատարանը փաստում է, որ նախաձեռնված վարույթով, ինչպես նաև անջատված նոր վարույթով վարույթն իրականացնող մարմնի կողմից գծվում են քննության սահմաններ, անջատված վարույթը հանդիսանում է նոր վարույթ և իրավական իմաստով հավասարազոր է նախաձեռնված վարույթին և վարույթն իրականացնող մարմինը, ինչպես նախաձեռնված վարույթով, այնպես էլ անջատված նոր վարույթով իրավասու չէ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցել այն ենթադրյալ հանցավոր արաք կատարելու համար որով որ նախաձեռնված չէ և որի հիմքով որ չի անջատվել նոր վարույթը:

Բացի այդ Դատարանը գտնում է, որ Դատարանում քրեական վարույթն իրականացվում է միայն մեղադրյալի նկատմամբ և միայն նրան ներկայացված

մեղադրանքով, հետևաբար Դատարանում գործի քննության ժամանակ վարույթի ընդդատությունը պետք է որոշվի ներկայացված մեղադրանքների փաստական հիմքով և տրված իրավական գնահատականով, այլ ոչ թե նախաձեռնված վարույթով, այլապես ձևական է դառնում ՀՀ հակակոռուպցիոն դատարանի ստեղծման նպատակները, դերն ու նշանակությունը:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0333/01/25 (ԵԴ1/3911/01/25) քրեական գործն ըստ մեղադրանքի՝

- Սասուն Սուրենի Առուշանյանի՝ 1961 թվականի մարտի 07-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին կետով (որը համապատասխանում է 2021 թվականի մայիսի 05-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասին 10-րդ կետին), 1961 թվականի մարտի 07-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածով (որը համապատասխանում է 2021 թվականի մայիսի 05-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասին) և 1961 թվականի մարտի 07-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 17-99-րդ հոդվածի 7-րդ կետով (որը համապատասխանում է 2021 թվականի մայիսի 05-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 46-155-րդ հոդվածի 2-րդ մասին 13-րդ կետին).

ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, այսինքն առկա է ընդդատության մասին վեճ, որը լուծելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ Վճռաբեկ դատարանին: (…)»[3]*:*

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/3911/01/25 (ՀԿԴ/0333/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 14, թերթեր 115-134:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»*:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[6]:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, ինչպես նաև դատական երաշխիքների բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, այդ թվում՝ դատական երաշխիքների վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ թիվ 69144625 քրեական վարույթն անջատվել է թիվ 15208498 կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ քրեական վարույթից և սույն քրեական վարույթն անմիջականորեն կապված է Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա հիշյալ կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթի հետ, գտել է, որ թիվ ԵԴ1/3911/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին[7]:

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

- Հակակոռուպցիոն դատարանը, արձանագրելով, որ Ս.Առուշանյանին վերագրված ենթադրյալ հանցանքը չի հանդիսանում կոռուպցիոն բնույթի, գտել է, որ սույն քրեական վարույթն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին:

Բացի այդ, Հակակոռուպցիոն դատարանը, փաստելով, որ դատարանում քրեական վարույթն իրականացվում է միայն մեղադրյալի նկատմամբ և միայն նրան ներկայացված մեղադրանքի սահմաններում, գտել է, որ վարույթի ընդդատությունը պետք է որոշվի ներկայացված մեղադրանքի փաստական հիմքով և տրված իրավական գնահատականով, այլ ոչ թե նախաձեռնված վարույթով[8]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ մեղադրյալ Ս.Առուշանյանին ներկայացված մեղադրանքի ձևակերպումից հետևում է, որ վերջինիս ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցանք վերագրված չէ: Բացի այդ, սույն վարույթի փաստական հանգամանքների պայմաններում գտնում ենք, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշմամբ ներկայացված հիմնավորումները բավարար չեն արձանագրելու, որ սույն քրեական վարույթով մեղադրյալ Ս.Առուշանյանին ներկայացված մեղադրանքն անմիջականորեն կապված է Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթի հետ: Նման պայմաններում սույն վարույթի՝ Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու իրավական հիմքը բացակայում է:

15. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/3911/01/25 (ՀԿԴ/0333/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

16. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/3911/01/25 (ՀԿԴ/0333/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

---

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Սասուն Սուրենի Առուշանյանի վերաբերյալ՝ 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին կետով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետին), 232-րդ հոդվածով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասին) և 17-99-րդ հոդվածի 7-րդ կետով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 46-155-րդ հոդվածի 2-րդ մասին 13-րդ կետին) թիվ ԵԴ1/3911/01/25 (ՀԿԴ/0333/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ**	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ**